## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հոկտեմբերի 2017 թվականի N 218-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

Աշոտ Ռաֆիկի Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 2-րդ թաղամասի թիվ 3/58 հասցեի տնամերձ հողակտորում (կադաստրային համար 07-057-0333-0087) տալ Փ=25 սմ տրամագծով, Լ=110 գծմ երկարության ջրագծի կառուցման շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«23» հոկտեմբերի 2017 թվականի N 219-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 89-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2017 թվականի մայիսի 17-ի «Շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 89-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) «2017 թվականի դեկտեմբերի 30-ը:» բառերը փոխարինել «2018 թվականի հունիսի 30-ը:» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 23
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«24» հոկտեմբերի 2017 թվականի N 220-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետով և երկրորդ մասով, ***որոշում եմ.***

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու, ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար ստորև նշված աշխատակիցներին և համայնքային ծառայողներին խրախուսել միանվագ դրամական պարգևատրումով՝ հետևյալ չափերով.

| | | |
|---|---|---|
| Պետրոսյան | Ռոբերտ - համայնքի ղեկավար | 240 000 դրամ |
| Բադալյան | Գարեգին - համայնքի ղեկավարի տեղակալ | 130 000 դրամ |
| Թադևոսյան | Սուսաննա - աշխատակազմի քարտուղար | 170 000 դրամ |
| Մարգարյան | Անահիտ - բաժնի պետ | 150 000 դրամ |
| Մարտիրոսյան | Աստղիկ - գործավար | 90 000 դրամ |
| Քոչարյան | Նաիրա - օպերատոր | 90 000 դրամ |
| Մկրտչյան | Սիրուշ - գործավար | 80 000 դրամ |
| Պետրոսյան | Ռաֆիկ - վարորդ | 80 000 դրամ |
| Գևորգյան | Ռազմիկ - հավաքարար-պահակ | 50 000 դրամ |

2.Հանձնարարել ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին, վճարումն իրականացնել բյուջեի համապատասխան հոդվածից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 24
գ.Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հոկտեմբերի 2017 թվականի N 221-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Կաքավիկ Օնիկի Առաքելյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի Այգեգործական 27-րդ թաղամասի թիվ 1 հասցեի հողակտորում բնակելի տան և պարիսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 24
գ. Ջրվեժ